ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 24. Մաքսային ծառայողի պարտականությունները

1. Մաքսային ծառայողը պարտավոր է՝

1) իր իրավասության սահմաններում ապահովել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, օրենքների և այլ իրավական ակտերի պահանջների կատարումը, ինչպես նաև տիրապետել մասնագիտական և ծառայողական պարտականությունների կատարման համար անհրաժեշտ այլ գիտելիքների.

2) իր իրավասության սահմաններում ապահովել քաղաքացիների օրինական շահերի և իրավունքների պահպանումը.

3) կատարել վերադաս մաքսային մարմնի ղեկավարի ու պաշտոնատար անձանց՝ իրենց իրավասության սահմաններում տրված օրինական հրամաններն ու կարգադրությունները.

4) իր իրավասության սահմաններում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ուսումնասիրել քաղաքացիների, կազմակերպությունների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների դիմումները և ընթացք տալ դրանց.

5) պահպանել ծառայողական տեղեկությունների հետ աշխատելու կարգը.

6) օրենքով սահմանված դեպքերում սկսել հետաքննության և նախաքննության գործերը.

6.1) մաքսանենգության և, օրենքով նախատեսված դեպքերում, մտավոր սեփականության իրավունքի խախտման գործերով իրականացնել դեպքի վայրի պահպանության, որի կանոնները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը.

7) մասնակցել վերադաս մաքսային մարմնի ղեկավարի հաստատած ծրագրով անցկացվող ուսումնավարժական հավաքներին, մրցույթներին և այլ ծառայողական միջոցառումներին.

8) ճշգրիտ, ժամանակին, բարեխղճորեն և անշահախնդրորեն կատարել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ իրեն վերապահված այլ պարտականություններ.

9) պահպանել մաքսային ծառայողի վարքագծի (էթիկայի) կանոնները, որոնք հաստատվում են վերադաս մաքսային մարմնի ղեկավարի կողմից:

2. Մաքսային ծառայողի պարտականություններն ըստ զբաղեցրած պաշտոնի որոշում է վերադաս մաքսային մարմնի ղեկավարը:

(24-րդ հոդվածը փոփ. 11.04.03 ՀՕ-539-Ն, լրաց. 18.11.09 ՀՕ-212-Ն)